ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ.՝ (+374 11) 518
էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«24» 09 2020թ.

№ 963-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի և սպասարկումների բաժնի գլխավոր մասնագետ Արման Ստեփանյանի կողմից 15.06.2020թ. կազմված 034860 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու վարչական տույժ նշանակելու համար նյութեր նախապատրաստող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/, 24.09.2020թ. տեղի ունեցած նիստի ընթացքում քննեց 15.06.2020թ. կազմված թիվ 034860 արձանագրության մեջ նշված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որի համաձայն՝ «Փրայդ-Լ» ՍՊ ընկերության տնօրեն Լիանա Ղազազյանի կողմից 15.06.2020 թվականին Երևան քաղաքի Տ.Մեծի պողոտա թիվ 36 հասցեի հարևանությամբ իրականացվել է ոչ սահմանված վայրում առևտուր:

Գործի քննության ընթացքում Հանձնաժողովը, էական փաստական և իրավաբանական հանգամանքների հետազոտման արդյունքում պարզեց, որ «Փրայդ-Լ» ՍՊ ընկերության տնօրեն Լիանա Ղազազյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 162-րդ հոդվածի 1-ին մասով /ոչ սահմանված վայրում առևտուր անելը/ նախատեսված վարչական իրավախախտումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները, ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 219.1-րդ և 281-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «Փրայդ-Լ» ՍՊ ընկերության տնօրեն Լիանա Ղազազյանին Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Առաջարկել «Փրայդ-Լ» ՍՊ ընկերության տնօրեն Լիանա Ղազազյանին միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ և Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ վճարում կատարելով կենտրոնական գանձանպետարանի 900015213110 հաշվեհամարին: Օրենքով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում այն կարող է բռնագանձվել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

3. Կայացված որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով կուղարկվի «Փրայդ-Լ» ՍՊ ընկերության տնօրեն Լիանա Ղազազյանին:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով /ՀՀ վարչական դատարան/ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ